

Վճարահաշվարկային համակարգերի հսկողությունը (oversight)՝ որպես ՀՀ կենտրոնական բանկերի նորագույն ֆունկցիա

Վճարային համակարգերը կարող են հանդիսանալ համակարգային ռիսկերի առաջացման և տարածման միջավայր: Համակարգային ռիսկեր կարող են առաջանալ, երբ օրինակ տեխնիկական վթարի հետևանքով խափանվում է համակարգի սահուն գործունեությունը, կամ երբ համակարգի մասնակիցներից մեկը անկարող է կատարել իր ֆինանսական պարտավորությունները, և համակարգում բացակայում են հատուկ մեխանիզմներ, որոնք կարող են սահմանափակել տեխնիկական վթարի կամ ֆինանսական խնդիրների բացասական հետևանքների շղթայական տարածումը այլ մասնակիցների վրա: Վճարահաշվարկային համակարգերի կայունությունը ապահովելու համար անհրաժեշտ է, որ ՀՀ ԿԲ-ն ապահովի, որ համակարգերի կազմակերպման և գործունեության կանոնները չնպաստեն ֆինանսական և գործառնական ռիսկերի գոյացմանը կամ տարածմանը, համակարգում սահմանված լինեն ռիսկերի կառավարման մեխանիզմներ և վճարային համակարգի մասնակիցները ունենան հնարավորություններ և խթաններ զսպելու հնարավոր ռիսկերը:

Հենց այս նպատակով է Կենտրոնական բանկի կողմից իրականացվում վճարահաշվարկային համակարգերի հսկողություն (այսուհետ՝ ՎՀՀ):

ՎՀՀ-ն ապահովում է, որ վճարային համակարգի ենթակառուցվածքները և վճարային ծառայություններ մատուցող շուկաները՝

ա/ աշխատեն անխափան, արդյունավետ և բոլոր մասնակիցների և օգտագործողների համար ազնիվ ձևով;

բ/ նվազեցնեն և վերահսկեն այն ռիսկերը, որոնք առաջանում են վճարային համակարգի առանձին մասնակցի կողմից իր պարտավորությունների վերջնահաշվարկը ապահովելու անկարողության հետևանքով և որոնք կարող են տնտեսությունում ցնցումների տարածման պատճառ հանդիսանալ;

գ/ ապահովեն տեխնոլոգիական և ինստիտուցիոնալ զարգացման այնպիսի մակարդակ, որը կարող է բավարարել զարգացող տնտեսության կարիքները վճարահաշվարկային բնագավառում:

Միջազգային հաշվարկների բանկի (BIS) կողմից 2005թ. մայիսին մշակվել է Կենտրոնական բանկերի կողմից վճարահաշվարկային համակարգերի հսկողությունը՝ փաստաթուղթը, որում ներկայացված են ՎՀՀ-ի ընդհանուր սահմանումը և կենտրոնական բանկերի կողմից հսկողության արդյունավետ իրականացման սկզբունքները (թափանցիկություն, միջազգային ստանդարտներին համապատասխանություն, համապատասխան իրավասությունների առկայություն, համագործակցություն և նմանատիպ համակարգերին նույնատիպ մոտեցում): ՀՀ կենտրոնական բանկը (ՀՀ ԿԲ) հսկողության բնագավառում իր քաղաքականությունն իրականացնելիս հիմնվում է այս սկզբունքների վրա:

Հսկողության վերոնշյալ սկզբունքներից մեկի համաձայն (general oversight principle C)՝ ՀՀ ԿԲ-ն պետք է ունենա համապատասխան իրավասություններ և կարողություններ հսկողության բնագավառում իր աշխատանքներն արդյունավետ իրականացնելու համար: Հայաստանի Հանրապետությունում օրենքի ուժով Կենտրոնական բանկին է վերապահված ՀՀ-ում՝ «...գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելու և զարգացնելու...» խնդիրը և դրա հետ կապված տրված են լայն իրավասություններ՝ «...կարգավորելու և վերահսկելու վճարահաշվարկային համակարգի, այդ թվում՝ վճարահաշվարկային ծառայություններ մատուցող բանկ չհանդիսացող կազմակերպությունների գործունեությունը...»: Այսինքն՝ ՀՀ ԿԲ-ին տրված են լայն իրավասություններ, որի տարր է հանդիսանում նաև ՎՀՀ-ն:

2004թ. նոյեմբերին՝ Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին ՀՀ օրենքի ընդունումն ավելի հստակ ամրագրեց Կենտրոնական բանկի իրավասությունները ՎՀՀ-ի իրականացման ուղղությամբ: Օրենքի համաձայն բոլոր վճարահաշվարկային կազմակերպությունները պետք է լիցենզավորվեն Կենտրոնական բանկի կողմից, և վճարահաշվարկային համակարգերի ստեղծման և գործունեության իրականացման, ինչպես նաև արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության համար անհրաժեշտ է ստանալ Կենտրոնական բանկի թույլտվությունը: Կենտրոնական բանկի խորհրդին տրված է նաև իրավասություն ուժը կորցրած ճանաչել հայաստանյան վճարահաշվարկային համակարգի ստեղծման և գործունեության, ինչպես նաև արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության վերաբերյալ իր տված թույլտվությունը, եթե առկա են Օրենքով սահմանված հիմքերը: Այդ հիմքերից են նաև այն դեպքերը, երբ համաձայն Կենտրոնական բանկի կողմից սահմանված չափանիշների վճարահաշվարկային համակարգի գործունեությունը կարող է վտանգել ՀՀ ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը, կամ երբ վճարահաշվարկային համակարգի ստեղծումը կարող է հանգեցնել համակարգի մասնակից բանկի և (կամ) բանկերի Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված չափանիշներով հիմնավորված ֆինանսական վիճակի վատթարացմանը:

Համաձայն Օրենքի՝ Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է վճարահաշվարկային համակարգերի համար սահմանել տեխնիկական, անվտանգության, ծրագրային, ինչպես նաև համակարգի գործունեության կանոնների բովանդակությանը ներկայացվող պահանջներ: Օրենքը սահմանում է նաև Կենտրոնական բանկի իրավասությունը վճարահաշվարկային համակարգի գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացման համար, վճարահաշվարկային համակարգի մասնակիցների կողմից օրենսդրության պահանջների խախտման համար պատասխանատվության միջոցառումները, վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկությունների հրապարակման կարգը, ինչպես նաև վճարահաշվարկային փաստաթղթերի անվերադարձելիությունը և գուտացման անվերադարձելիությունը, ֆինանսական ակտիվների օգտագործումը Կենտրոնական բանկի, քլիրինգ կամ վերջնահաշվարկ իրականացնող մասնակցի կողմից: